ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2024 թվականի №---Ա

«ՏԵՄԱՖՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԾԱՆՈՒՑՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ «ՏԵՄԱՖՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2022 թվականի նոյեմբերի 16-ի №444-Ա որոշմամբ, որն անբողոքարկելի է դարձել 2023 թվականի փետրվարի 24-ին, Ընկերությանը նախազգուշացրել է և պարտավորեցրել որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը,

բ) Որոշման համաձայն՝ Ընկերությունը մինչև 2023 թվականի հունվարի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը, ինչպես նաև մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով հաստատված ձևերին համապատասխան 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2023 թվականի նոյեմբերի 8-ի №384-Ա և №386-Ա որոշումներով, Ընկերությանը նախազգուշացրել, տուգանել և պարտավորեցրել է որոշումներն ուժի մեջ

մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 2-րդ, 2023 թվականի 1-ին կիսամյակների հաշվետվությունները և №386-Ա որոշման 1-ին կետով ամրագրված 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

գ) Որոշման համաձայն՝ Ընկերությունը մինչև 2024 թվականի հունվարի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածով հաստատված ձևերին համապատասխան 2023 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունները, սակայն չի ներկայացրել,

դ) Որոշմամբ սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 26-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 26-ի №ՍՇ/34.2-Մ2-7/1239-2024 գրությամբ,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջները,

է) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12.1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կարգավորողն իրավասու է կասեցնել ծանուցում ներկայացրած անձանց գործունեությունը ծանուցված գործունեության մասով, եթե՝ ծանուցում ներկայացրած անձը խախտել է նշված օրենքը կամ դրա համաձայն ընդունված որևէ կանոն կամ կանոնակարգ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12.1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերության կողմից ծանուցմամբ իրականացվող գործունեությունը կասեցնել՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2024թ.